

Կ-265³-12.02.2018,06.03.2018-ՊԻՄԻ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«6) պահպանել Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:»:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում: Առցանց (ուղիղ ժամանակային ռեժիմում) հեռարձակման իրականացումը ապահովում է քաղաքապետարանի աշխատակազմը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին և 7.2-րդ մասերով.

«7.1. Երևանի ավագանու հրապարակային նիստում ավագանու անդամներից և հարցի քննարկմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանցից բացի, կարող են ներկա լինել՝

1) օրենքով նման իրավունք ունեցող անձինք.

2) Երևանի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը և նրա սահմանած ցանկով նիստի սպասարկումը կամ լուսաբանումն ապահովող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կամ Երևանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցները.

3) Երևանի քաղաքապետի կամ նիստը վարողի հրավիրած՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցները կամ այլ անձինք:

7.2. Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններում հավատարմագրված լրագրողները իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում առանձնացված հատուկ տեղում, որը ապահովված է ավագանու հրապարակային նիստերը առցանց (ուղիղ ժամանակային ռեժիմում) հեռարձակմամբ դիտելու և ձայնագրելու տեխնիկական հնարավորությամբ, իսկ ավագանու նիստերի դահլիճում կարող են ներկա լինել Երևանի քաղաքապետի կամ նիստը վարողի թույլտվությամբ:»:

Հոդված 3. Օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-րդ կետով.

«5.1) հաստատում է Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները»:

Հոդված 4. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը «աշխատանքները» բառից հետո լրացնել «և ապահովում նրա բնականոն գործունեությունը» բառերով.

2) 13-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին կետ.

«14.1. «Ջանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենի 6-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատում է Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում մամուլի ասուլիսների, ձեպագրույցների անցկացման կարգերը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: